ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՈՒՆ

ԽՈՐԵՆ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԵԳՆԱԶԱՆ ՍԱՀԱԿԻ

ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺ

ԺԳ. 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ե. Ս.Գրիգորյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր **Ա. Վ. Աբրահամյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա. Լ. Մինասյան**

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. հունիսի 13-ին ժամը 14^{00} - ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ- ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. մայիսի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Ա.Վ. Ավագյան**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մանկավարժական գիտությունների համակարգում առանձնակի կարևորություն է տրվում մանկավարժության պատմությանը և նրա ուսումնասիրմանը: Դա գալիս է լրացնելու այն բացը, որ ստեղծվել է մանկավարժության և մասնավորապես հայ մանկավարժության անցյալի պատմության ուսումնասիրման հարցում: Հայ մանկավարժների մի ստվար բանակ զբաղվել է հայ դպրոցի զարգացման ու կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման հարցերով՝ ստեղծելով արժեքավոր դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ, թողնելով տեսամեթոդական հարուստ ժառանգություն, որը նպաստել է ժամանակի մանկավարժական հրատապ խնդիրների լուծմանը:

19-րդ դարի երկրորդ կեսին հայ հասարակական գործիչները, ողջ մտավորականությունը և մանկավարժները ձեռնարկում էին ամենատարբեր միջոցներ՝ կրթության և դաստիարակության առաջնահերթ խնդիրները լուծելու, հային հայ պահելու համար:

Դրա ջատագովներից էր արևմտահայ հասարակական առաջադիմական մտքի փայլուն ներկայացուցիչ, ականավոր մանկավարժ, մեծահամբավ ժողովրդավար հրապարակախոս, հրատարակիչ, խմբագիր, գրող, գրականագետ, թարգմանիչ, Մատթեոս Մամուրյանը:

Հետազոտության արդիականությունը: Ամեն մի պատմահամեմատական հետազոտություն արդիական է, եթե ելնում է գիտության պատմականության սկզբունքից:

Անկախության ձեռք բերումից հետո, առավել քան երբևէ, կարևորվում են հայեցի դաստիարակության և ազգային կրթության հիմնախնդիրները: Դրանց արդյունավետ լուծումը պայմանավորված է նաև հայ բազմադարյան դպրոցի և մանկավարժական մտքի խոր ու համակողմանի ուսումնասիրությամբ:

Այս տեսակետից արդիական է հայ մանկավարժության պատմության մեջ լիարժեքորեն չուսումնասիրված դեմքերից մեկի՝ մանկավարժ, հրապարակախոս, կրթության ոլորտի նշանավոր ներկայացուցիչ Մատթեոս Մամուրյանի մանկավարժական ժառանգության գիտական ուսումնասիրությունը:

Հետազոտության նպատակը ազգային գործիչ Մ. Մամուրյանի մանկավարժական գաղափարների ուսումնասիրությունը և արժևորումն է՝ ժամանակակից ազգային դպրոցի ստեղծման տեսանկյունից:

Հետազոտության օբյեկտը Մ. Մամուրյանի հասարակական-մանկավարժական գործունեությունն է և մանկավարժական ժառանգությունը:

Հետազոտության առարկան Մ. Մամուրյանի հրապարակախոսական, մանկավարժական գործունեության արդյունքները և մանկավարժական առաջադեմ սկզբունքների, մեթոդների, ձևերի գիտամանկավարժական վերլուծությունն է:

Հետազոտության գիտական վարկածը: Ժամանակակից դպրոցում կբարձրանա իրականացվող ուսուցման և դաստիարակության գործընթացների արդյունավետությունը, եթե օգտագործվեն Մ. Մամուրյանի առաջադրած կրթության բովանդակությունը, ազգային ոգով ստեղծված դասագրքերը, ուսուցման և դաստիարակության գործընթացներում կիրառված սկզբունքներն ու մեթոդական համակարգը:

Հետազոտության խնդիրներն են.

- հետազոտել և վերհանել Մ. Մամուրյանի գիտամանկավարժական գործունեությունը՝ նոր լույս սփռելով նրա մանկավարժական առաջավոր, ժամանակի ոգուց բխող և այսօր էլ արդիական հայացքների վրա.
- ուսումնասիրել Մ. Մամուրյանի կողմից առաջադրած դաստիարակության ու զարգացման հայացքները, դիդակտիկական համակարգը՝ համեմատական վերլուծության ենթարկելով դրանք, ցույց տալով այժմեական նշանակությունը.
- վերլուծել Մ. Մամուրյանի մշակած՝ ուսուցչի անձնային և մասնագիտական որակները, դրանք դիտարկել այսօրվա պահանջների լույսի ներքո.
- բացահայտել Մ. Մամուրյանի առաջադրած՝ սովորողի անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացումն ապահովող մեթոդիկան և դրա կիրառման հնարավորություններն անձի ձևավորման ժամանակակից փուլում.
- առանձնացնել Մ. Մամուրյանի հատկապես այն մանկավարժական հայացքները, որոնք իրենց հրատապությունը պահպանել են նաև այսօր:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական վարկածն ու առարկան պայմանավորել են հետազոտության հետևյալ մեթոդների ընտրությունը.

- հիմնահարցին նվիրված գիտահետազոտական, գիտամեթոդական գրականության, մանկավարժության դասականների, փիլիսոփաների տեսական դրույթների, պատմական աղբյուրների և արխիվային գիտական փաստաթղթերի ուսումնասիրումն ու վերլուծությունը.
- էմպիրիկ կամ միջնորդավորված մեթոդները, որոնք հետազոտվող փաստաթղթերի հիմնական բնութագրերի, դրանց միջև կապերի ու հարաբերությունների վերաբերյալ գիտելիքների փորձարկումներն են.
- մանկավարժական տեղեկատվության կուտակման մեթոդները, որոնք դիտարկման միջոցով ապահովում են ուսումնասիրվող նյութի նպատակաուղղվածությունը, պլանավորվածությունը և համակարգվածությունը, ուսումնասիրվող երևույթի օբյեկտիվ ընկալումը:

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել բնության և հասարակության զարգացման մասին փիլիսոփայական սահմանումները, գիտական իմացության տեսությունը, հայ մանկավարժական մտքի պատմությանը նվիրված հետազոտությունները, մանկավարժության դասականների հայացքներն ուսուցման, կրթության և դաստիարակության վերաբերյալ, ժողովրդական կրթության մասին նորմատիվ փաստաթղթերը, մանկավարժական գիտության զարգացման օրինաչափությունները:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ.

- հայ մանկավարժական մտքի պատմության ուսումնասիրման շրջանակներում ամբողջական տեսքով տրվում են Մ. Մամուրյանի մանկավարժական հայացքներն ու ժառանգությունը.
- արժևորվում է Մ. Մամուրյանի մանկավարժական հայացքների արդիականությունը և հրատապությունը կրթական բարեփոխումների համատեքստում.
- Մ. Մամուրյանի մանկավարժական հայացքները ներկայացվում են ժամանակակից կրթական հարացույցի ոգով, համեմատվում են մանկավարժական ժամանակակից նորարարական տեսությունների հետ, դիտարկվում աշակերտակենտրոն, փոխգործակցային տեսությունների համատեքստում.
- Մ. Մամուրյանի հրապարակախոսական և մանկավարժական ժառանգությունը քննարկվում է ազգային դաստիարակության արդիական տեսանկյունից, որոնք իրենց արտացոլումն են գտել ժամանակակից գործող դասագրքերում:

Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ.

- համակարգվել ու հստակեցվել են Մ. Մամուրյանի մանկավարժական հայացքները, որոնք նպաստել են հայ մանկավարժական մտքի պատմության ամբողջացմանը.
- Մ. Մամուրյանի մանկավարժական հայացքների վերլուծությունը հանդիսացել է գիտատեսական աղբյուր, որը հիմք է տվել ըստ արժանվույն գնահատելու 19-րդ դարի արևմտահայ մանկավարժական մտքի զարգացումները.
- հետազոտությունը լրացնում է 19-րդ դարի արևմտահայ ազգային գործիչ ու հրապարակախոս Մ. Մամուրյանի կերպարի թերի մնացած կողմը.
- կամուրջ է ստեղծում Մ. Մամուրյանի մանկավարժական հայացքների և դրանց արդիականության միջև:

Հետազոտության գործնական նշանակությունը.

- «Մատթեոս Մամուրյանի մանկավարժական հայացքները» թեման կարող է դառնալ հատուկ դասընթացի նյութ՝ մանկավարժական բուհում.
- այն կարող է օգնել դպրոցական ժամանակակից դասագրքերում համապատասխան փոփոխություններ կատարելու, աշակերտների հայեցի դաստիարակության առանձնահատկությունները ընդգծելու և դպրոցականի համակողմանի ու ներդաշնակ զարգացումն ապահովելու համար,
- հետազոտությունն օգտակար կարող է լինել ազգային դաստիարակության նոր հայեցակարգի մշակման և նորարարական տեխնոլոգիաների ներդրման առումով:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

- 19-րդ դարի անվանի մանկավարժ Մ. Մամուրյանի մի շարք մանկավարժական հայացքներ արդիական են և նպաստում են նոր ազգային դպրոցի ստեղծման գործընթացին:
- Ժամանակակից դպրոցի ստեղծման համար կարևոր նշանակություն ունեն Մ. Մամուրյանի կողմից մշակված կրթական համակարգի գործունեության կազմակերպման մի քանի սկզբունքներ

(ժողովրդավարության, մատչելիության, համակարգվածության և այլն):

- Մ. Մամուրյանի գիտական մի շարք դրույթներ, գաղափարներ կարող են օգտագործվել նոր ազգային դպրոցի կառուցման տեսական հիմունքները մշակելիս:

Հետազոտության ներդրումը: Ատենախոսության նյութերը օգտագործվել են Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում և «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանում դասավանդվող «Մանկավարժության պատմություն» դասընթացում:

Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից և կազմում է 139 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտման թեմայի արդիականությունը, ընտրված է հետազոտության նպատակը, սահմանված են հետազոտության օբյեկտը, առարկան, վարկածը, ներկայացված են հետազոտության խնդիրները ու մեթոդները: Բացահայտված են գիտական նորույթը, աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Մատթեոս Մամուրյանի կյանքն ու գործունեության բնութագիրը» խորագրով, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում տրվում է ժամանակաշրջանի նկարագրությունը: Յուրաքանչյուր ժամանակաշրջան թելադրում է իր կրթական համակարգը, որն էլ պիտի ծառայի հասարակության շահերին: 19-րդ դարի երկրորդ կեսին Հայաստանի արևմտյան հատվածում զարգանում էր մշակույթը, որին նպաստում էին սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները՝ կապիտալիզմի զարգացումը, ազգային-ազատագրական շարժումների վերելքը, հարևան երկրների հետ մշակութային կապերի ընդլայնումը, հայ պարբերական մամուլի աշխուժացումը և այլն: Այս ամենի շնորհիվ կրթության համակարգում զարկ տրվեց բնական գիտությունների զարգացմանը, դպրոցից աստիճանաբար դուրս մղվեցին եկեղեցական, կրոնական ուսումնական առարկաները՝ իրենց տեղը զիջելով աշխարհիկին: Այս և նման առաջադիմական գաղափարների ջատագով էր Մ. Մամուրյանը: Հարկ ենք համարել մի քանի նախադասությամբ անդրադառնալ նրա կյանքին, քանի որ գտնում ենք, որ նրա մանկավարժական հայացքների մի մասը ձևավորվել են կյանքի այս կամ այն փուլի ազդեցության հետևանքով:

Խմբագրել է մի շարք հանդեսներ, լրագրեր՝ «Զոհալ», «Ծաղիկ», «Բազմավեպ», «Մեղու», «Կիլիկիա» (երբեմն ծածկանուններով՝ Վրույր, Շահնուր, երբեմն անանուն թողնելով հոդվածը), իսկ 1871 թ. ստեղծում է «Արևելյան մամուլ» պարբերականը և մինչև մահ՝ 1901 թվականը, նվիրվում այդ գործին:

Մ. Մամուրյանը 1869 թ. գլխավորում է նաև «Հայ ընթերցատուն» մտավորականների խումբը, ինչպես նաև մասնակցում ազգային սահմանադրության հաստատման համար ծավալված պայքարին:

Երկրորդ ենթագլխում փորձում ենք վերհանել նրա մոտեցումները դպրոցի նպատակի, ուսումնական կարգի վերաբերյալ և դրանք համեմատել ժամանակակից դպրոցի հետ: Դպրոցը բարեկարգել չի նշանակում միայն դասասենյակների, ուսուցիչների և ուսուցանվելիք նյութի նորացում և բարեկարգում: Բարեկարգել դպրոցն՝ առաջին հերթին նշանակում է ազգային կրթության նպատակի ըմբռնում:

Մամուրյա19-րդ դարի կ"ս"րում ազգային կրթության նպատակը համընկնում է այսօրվա դպրոցի հիմնական խնդրի լուծման հ"տ՝ ապահով"լ "ր"խայի ն"րդաշնակ և համակողմանի զարգացումը: Նույնչափ արդիական պահանջ է՝ հայ"ցի կրթությունն ու դաստիարակությունը:նը Մեսրոպյան վարժարանի համար նոր ուսումնակարգ է հաստատում: Նա վարժարանում առանձնացնում է չորս գլխավոր բաժիններ՝ ծաղկոց, նախակրթարան, պատրաստարան և ուսումնարան:

Ծաղկոցում կրթություն էին ստանում 7-10 տարեկանները, այսինքն՝ ծաղկոցը համընկնում է մեր այսօրվա տարրական դպրոցի հետ և բաժանվում էր երեք դասարանների: Ծաղկոցում երեխաներին սովորեցնում էին արտասանել, կարդալ, հաշվել և աղոթել:

Նախակրթարանում սովորում էին 9-12 տարեկան երեխաները, որոնց ուսուցանվում էր ընթերցանություն, քերականություն, ազգային պատմություն, աշխարհագրություն, վայելչագրություն և քրիստոնեական հրահանգ:

Պատրաստարանում սովորում էին 10-13 տարեկանները, այն ևս բաժանված էր երեք դասարանների, որտեղ ուսուցանվում էին ընթերցանություն, քերականություն, ազգային պատմություն, թվաբանություն (արդեն ավելի բարդ, քան նախակրթարանում), ֆրանսերեն և թուրքերեն:

Ուսումնարանում ուսանում էին 13-16 տարեկան երեխաները, որոնք ուսումնասիրում էին հետևյալ ուսումնական առարկաները՝ քերականություն, գրաբար, հռետորական ընդհանուր կանոններ, ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, տոմարակալություն, բնագիտություն, ֆրանսերեն, անգլերեն, թուրքերեն, քրիստոնեական վարդապետություն, Հայաստանի եկեղեցու պատմություն և բարոյախոսություն:

Մ. Մամուրյանն իրավացիորեն նշում էր, որ դպրոցական, ինչպես նաև յուրաքանչյուր գործունեության հաջողության գրավականը նախ և առաջ նպատակը հստակ ձևակերպելն է: Դպրոցի նպատակը չէ աշակերտին դարձնել կոշկակար, դերձակ, ժամագործ. «նրա պաշտոնը շատ ընդարձակ է, նա պետք է ընտանիքի թողած ընդարձակ անջրպետը լցնի, աշակերտի բնական ձիրքերը ներդաշնակաբար զարգացնի, որ նա կարողանա վերջը ինչ կոչման մեջ էլ որ լինի յուր արժանավոր տեղը բռնել, սիրել լույսը, ճշմարտությունը և գիտենա կատարել յուր պարտքը դեպ ի յուր նմանները»[1]:

Այսպիսով, եզրահանգում է Մամուրյանը, դպրոցի նպատակն է երեխային պատրաստել իր ապագա կոչման համար, այսինքն՝ այնպիսի պայմաններ ստեղծել, որ երեխան կարողանա կողմնորոշվել իր մասնագիտության ընտրության հարցում, ուրեմն և՝ «կարծիք չկա որ դպրոցի մեջ պետք է մտցնել ձեռարվեստը»[2]:

Երրորդ ենթագլխում խոսվում է Մ. Մամուրյանի՝ ազգային լեզվի խնդիրների նկատմամբ մոտեցումների մասին: Ինչպես շատ ու շատ մանկավարժներ (Կ. Դ. Ուշինսկի, Խ. Աբովյան և ուրիշներ), Մամուրյանը խիստ կարևորել է լեզվի հարցը՝ որպես ազգապահպանման միջոց: Նա անմասն չմնաց այդ շրջանում ծավալված գրաբար-աշխարհաբար պայքարից: Չթերագնահատելով գրաբարը՝ որպես հարուստ ու հին լեզու՝ նա թվարկում է աշխարհաբարի առավելությունները և այն կիրառում իր ղեկավարած կրթական հաստատություններում:

Մամուրյանի հայացքները լեզվի խնդրի վերաբերյալ ի մի բերելով, անհրաժեշտ է նշել նրա մեծ ավանդը բարբառների և զանազան

---

[1] «Արևելյան մամուլ», 1884, սեպտեմբեր, էջ 491:
[2] Նույն տեղը:

լեզուների հարակցության քննարկման հարցում: Սակայն գնահատելի է այն փաստը, որ 19-րդ դարի 70-ական թվականներին Մամուրյանը մեծ ուշադրություն է դարձրել գավառական բարբառների, հասարակաց լեզուների դիտարկմանն ու քննարկմանը:

Լեզվի նկատմամբ Մամուրյանի այդպիսի վերաբերմունքը բացատրվում է նրանով, որ լեզուն ոչ միայն ազգապահպանման, այլ նաև հասարակության առաջընթացն ապահովող գործոն է:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Մ. Մամուրյանի մանկավարժական հայացքները» խորագրով, հանդիսանում է ատենախոսության առանցքը: Այն բաղկացած է հինգ ենթագլխից:

Առաջին ենթագլխում տրվում է Մամուրյանի կողմից ներկայացված համակողմանի դաստիարակության առանձին կողմերի վերլուծությունը և դրանց արդիականությունը:

Ուսումնասիրության արդյունքում եկել ենք այն եզրակացության, որ 19-րդ դարի երկրորդ կեսին, երբ անատոմիան և ֆիզիոլոգիան որպես առանձին գիտություններ մեր իրականության մեջ դեռևս լիարժեք կերպով ձևավորված չէին, Մամուրյանը կարողացել է ճշգրիտ վերլուծել ֆիզիկական դաստիարակության ձևերը, միջոցները և անհրաժեշտ պայմանները, որոնցից շատերը մեր օրերում անտեսվում են: Նա նշում է նաև ֆիզիկական դաստիարակությունն իրագործելու հիմնական պայմանները՝ «սնունդ, մաքրություն, զգեստ, օդ ու լույս, կրթություն և հանգիստ»: Քննարկվում են այս պայմաններից յուրաքանչյուրը՝ ընդգծելով դրանց առավելությունները և կիրառման արդյունավետությունը: Օրինակ՝ ինչպիսի զգեստ պետք է կրի դեռատի աղջիկը, որպեսզի չխաթարվի նրա կառուցվածքը, ինչպես պետք է սնվի նա և այլն: Նույն գիտական լրջությամբ նա անդրադառնում է նաև դաստիարակության մյուս կողմերին, կանգ առնում հատկապես ընտանեկան դաստիարակության վրա՝ կարևորելով մոր դերը. «Ծնողք իրենց զավակին գիտնական չեն կարող դարձնել, բայց մարդ դարձնելը ծնողի ձեռքին է»[3]:

Մարդու հանգիստն ու մարզանքը պետք է լինեն չափավոր և ճիշտ հաջորդեն իրար՝ և քիչ քնել, շատ աշխատելն է վնաս, և քիչ աշխատելն ու շատ քնելը: «Պետք է միշտ չափ մը պահել թե կրթության և թե հանգստի ժամերու մեջ»[4]: Այստեղ զգացվում է ոչ միայն մանկավարժի մտածելակերպը, այլև բնագետի, բժշկի:

Բարոյական դաստիարակության մեջ հատկապես կարևորում է հայրենասիրության դաստիարակումը, քանզի իր դարաշրջանում դպրոցի երկրորդ հիմնական գործառույթը հայրենասիրական-հայրենապաշտպան գործառույթն էր: «Հայրենյաց սերը բնական զգացում մ'ն է»: Մ. Մամուրյանը հայրենիքը համեմատում է ընտանիքի հետ և գտնում, որ հայրենասիրությունը ոչ միայն բարեկիրթ մարդկանց համար է, այլև «վայրենի մարդն ալ ունի»: Հայրենասիրությունը վեհ զգացում է, որը մարդուն պարտավորեցնում է, թեկուզ և հեռվում գտնվելով, աշխատել հայրենիքի բարօրության համար: Մամուրյանը որպես հմուտ մանկավարժ չափ է դնում նաև հայրենասիրության մեջ՝ մերժելով կույր

---

[3] «Արևելյան մամուլ», 1871, փետրվար, էջ 49:
[4] Մամուրյան Մ., Գիտելիք և պարտիք տղոց, էջ 244:

հայրենասիրությունը, ավելորդ սնափառությունը. «Երբոր մարդ իր հայրենիքը շարունակ կը գովէ, երբոր անոր պակասություններուն վրայ աչք կը գոցէ, երբոր անկից դուրս եկած բառերը կատէ, այն ատեն կույր հայրենասեր կ'ըլլայ»[5]:

Սա կեղծ հայրենասիրություն է. իսկական հայրենասերը պարտավոր է ճանաչել իր հայրենիքի ցավերը, ապրել դրանցով և աշխատել դարմանել դրանք: Հայրենիքը պետք է սիրել գործով և ոչ թե խոսքով. այն արարքը, գործողությունը, որը նպաստում է հայրենիքի բարգավաճմանը, զարգացմանը, վերելքին, դա է հայրենասիրությունը, իսկ ընտանիքի, դպրոցի, ողջ հասարակության առաջնահերթ խնդիրն է՝ նպաստել այդ ամենին:

Երեխայի մտավոր զարգացումն առավելապես ապահովում է դպրոցը, սակայն դա չի նշանակում, որ այն սկսվում է յոթ տարեկանից. պետք է հիշել, որ այն ժամանակից, երբ երեխան բացում է աչքերը, սկսվում է նրա մտավոր դաստիարակությունը: Սակայն շատ ծնողներ, այս բանը չգիտակցելով և ամբողջ հույսը դնելով դպրոցական դաստիարակության վրա, «մանկան դիտողությունն իր տեսած բաներուն վրա փոխանակ քաջալերելու և ուղղելու, կ'արգիլեն»[6], փոխանակ ճշտելու և հնարավորինս հասկանալի բացատրություն տալու:

Դպրոցում աշխատանքային դաստիարակության իրագործման համար Մ. Մամուրյանը ներմուծում է նոր ուսումնական առարկա՝ ձեռարվեստ, որն «աչքի առաջ պիտի չունենայ այս ու այն արհեստը, միայն պիտի ջանայ ջղերը կազդուրել, աչքին լավ կշռադատություն տալ, ձեռքին՝ վարժություն, ճարպկություն»[7], մի խոսքով՝ պետք է մարմնի տարբեր մասերը այնպես կատարելագործել, որ նրանք հեշտ ու արագ հնազանդվեն մտքի հրամաններին:

Գեղագիտական դաստիարակության նկատմամբ Մ. Մամուրյանի դրական վերաբերմունքն արտահայտվում է նաև նրանում, որ նա պայքարում էր հայկական դպրոցներում «Երաժշտություն» առարկայի դասավանդման համար: Մեսրոպյան վարժարանում երաժշտության դասընթաց կազմակերպելու համար նա այդ պաշտոնի համար հատուկ մասնագետ-վարպետներ է հրավիրում: Մամուրյանը միաժամանակ նշում է, որ ազգային երաժշտությունը հաճախ անտեսվում է. պատճառն այն էր, որ խոշոր քաղաքներում (Կ. Պոլիս, Զմյուռնիա) նկատելի էր եվրոպական (արևմտյան), իսկ գավառներում ցավալիորեն արևելյան «նեյնիմների, զանգուլակների» ազդեցությունը. այս ամենը բացասաբար էր ազդում հայրենասեր սերնդի և ազգային սովորույթների ձևավորման վրա:

Երկրորդ ենթագլխում շարունակում ենք ներկայացնել Մ. Մամուրյանի մանկավարժական առաջադեմ գաղափարների իրականացումն իր իսկ՝ հեղինակի ձեռքով: Մամուրյանն իր ղեկավարած դպրոցներում այնպիսի ուսումնական առարկաներ է ներմուծում, որոնք այն ժամանակ համարվում էին նորամուտ, իսկ այսօր՝ պարտադիր ուսումնական առարկաներ: Այդպիսիք են ձեռարվեստը (այսօր՝ «Աշխատանքի ուսուցում»), մարմնամարզությունը,

---

[5] Մամուրյան Մ., Գիտելիք և պարտիք տղոց, էջ 97, 98, 99:
[6] «Արևելյան մամուլ», հուլիս, 1879, հուլիս, էջ 109:
[7] Տե՛ս «Արևելյան մամուլ», 1884, սեպտեմբեր, էջ 492:

երաժշտությունը, հայ եկեղեցու պատմությունը (իրականում դասավանդվում էր հայոց պատմություն, որն այդ շրջանում արգելված էր):

19-րդ դարի երկրորդ կեսին հայկական դպրոցներում հիմնականում դասավանդվում էին թվաբանություն, երկրաչափություն, աստղագիտություն, ճարտասանություն, ընթերցանություն, քերականություն, քերականական հրահանգ, ֆրանսերեն, թուրքերեն, անգլերեն և այլ առարկաներ:

Մ. Մամուրյանը չի բավարարվում սոսկ այս առարկաների դասավանդմամբ. նշված ցանկը նա լրացնում է այնպիսի նոր առարկաներով, որոնցով ևս դառնում է նորարար հայ մանկավարժության պատմության մեջ:

Նա մեծ կարևորություն է տալիս ճշգրիտ, հատկապես մաթեմատիկական գիտություններին: Մաթեմատիկայի՝ որպես գիտության, կայացման գործում նշանավորում է արաբների դերը. «Եվկլիդեսի նշանավոր գործը ժամանակին թարգմանել է արաբացի հեղինակ Նասիրեդդինը»[8]:

Մամուրյանը Մեսրոպյան վարժարանում կիրառում էր Եվկլիդեսյան երկրաչափության դասագիրքը՝ համարելով, որ ճշգրիտ գիտություններն են նպաստում կայուն գիտելիքների ստացմանը: Նա ներմուծում է նաև այնպիսի առարկաներ, ինչպիսիք են երաժշտությունն և ձեռարվեստը: Կոչ էր անում ազգային դպրոցների ծրագրերի մեջ ներմուծել երաժշտական կրթություն, բայց ոչ շարականներ և հոգեցեցուցիչ ժամերգություն[9]: Երաժշտությունն այնպես ուսուցանել, ինչպես որ լեզուն կսովորեցնեն, քանի որ «երաժշտությունը լեզու մ'ն է», որով մեծացնում ենք երեխայի կարողությունների սահմանները:

Խոսելով ձեռարվեստ առարկայի դասավանդումից՝ Մ. Մամուրյանը նշում է, որ դպրոցներում ձեռարվեստի դասավանդումը «ոչ միայն անհրաժեշտ է, այլև մի պարտք է մեզ համար»[10]: Ուսումնական առարկաների ընտրության հարցում կարևոր է իմանալ «նախ թե ի՞նչ պետք է տղուն», հետո՝ ինչը հետաքրքիր է երեխային:

Երրորդ ենթագլխում ուսուցման սկզբունքներն ու մեթոդներն ուսումնասիրելիս նպատակ ենք ունեցել ցույց տալ դրանց արդիականությունը: Խոսքը մասնավորապես զննականության, մատչելիության, համակարգվածության և հաջորդականության, գիտակցական ընկալման, կյանքի հետ կապի, դաստիարակող ուսուցման, բնահարմարության սկզբունքների մասին է, որոնք Մ. Մամուրյանը ոչ միայն կարևորել է, այլ նաև կիրառել իր կազմած դասագրքերում: Մամուրյանի առաջ քաշած սկզբունքները ոչ միայն գիտական հիմք ունեն, այլև բավարարում են ժամանակի պահանջներին և արդիական են այսօր: Սակայն այս ամենով հանդերձ՝ նա կարևորում է սկզբունքների կիրառման ժամանակ չափի պահպանումը, քանի որ չափի չարաշահումը տալիս է հակառակ արդյունքը և, բացի այդ, «մեր զգայարանքի գործարաններն ի բնէ լավ

---

[8] Կարինյան Ա. Բ., Մ. Մամուրյանը մշակույթի պատմության մասին, էջ 51:

[9] Դրանով նա դեմ չէր հայկական հոգևոր երաժշտությանը, այլ բազմազանության նկատառումներով է գրում, որ անընդհատ լսել եկեղեցական օրհներգներ՝ նպատակահարմար չէ:

[10] «Արևելյան մամուլ», 1884, սեպտեմբեր, էջ 494:

վիճակի մեջ են, բայց պետք է չափով գործածել զանոնք, ապա թե ոչ կը վնասուին, կը տկարանան»[11]:

Եթե ուսուցման սկզբունքների ճիշտ, տեղին կիրառումն ապահովում է յուրացման բովանդակությունը, ապա դրանց տեղին ու չափավոր կիրառումն առողջ սերունդ ապահովելու անհրաժեշտ նախապայման է:

Մ. Մամուրյանի առաջ քաշած սկզբունքները սպասվելիք դրական արդյունքներ կտան, եթե դրանց իրագործման ընթացքում ապահովվի սովորողների ինքնագործունեությունը և ներքին ակտիվությունը, որին կարելի է հասնել միայն գործնական, ակտիվացնող մեթոդների միջոցով:

Մատչելիության սկզբունքի կիրառման գործում Մամուրյանի գործն ավելի է արժեքավորվում, եթե հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ 1860-ական թվականներին հոգեբանությունը դեռ լրիվ չէր բացահայտել ուշադրության, հիշողության, մտածողության և մյուս հոգեկան գործընթացների ֆիզիոլոգիական, փիլիսոփայական-բնագիտական հիմքերը, որոնք բացառիկ դեր պիտի խաղային ուսուցման և դաստիարակության տեսության և գործնական զարգացման բնագավառում:

Հիմնավոր և ճշգրիտ կրթությունը նա կապում էր ուսուցման մեթոդների բնույթի և նրանց ճիշտ ընտրության հետ: «Ինքնին մեծ կարևորություն ունեցող գիտությունը չէ, այլ մեթոդն որով այդ գիտությունը կ'ստացվի և կսէպիականվի»[12]:

Ուսուցումը պետք է այնպես կազմակերպել, որ երևա տվյալ գիտելիքի կարևորությունը և միայն այդ ժամանակ կարելի է հասնել առաջադրված նպատակին:

Առաջնությունը տալով հետազոտության մեթոդին՝ Մ. Մամուրյանը նշում է. «Հետազոտության մեթոդը կտանի մեզ այն ճշմարտութեանց աղբյուրին, որմե կծագին. այն կօգնե ուսանողին գյուտերու հետքն որոնել տալ և ուղղել զինք դեպի այն ճամփաներն, որոնց մեջ նույն ինք ուսուցիչն իր գյուտերն ըրած է, թե արդյոք տրված դասը միտք ու մտածմունք կգրգռե, թե ոչ փորձելու համար, բավական է միայն դիտել թե աշակերտներն ինքնին նոր-նոր գաղափարներ կարող են գտնել»[13]:

Չորրորդ ենթագլխում ներկայացնում ենք Մ. Մամուրյանի առաջադրած տարիքային պարբերացումը, որն ունի խոր անատոմիա-ֆիզիոլոգիական և հոգեբանական հիմքեր: Այն աչքի է ընկնում նաև յուրօրինակությամբ և յուրաքանչյուր շրջանի առանձնահատկությունների գիտական հիմնավորմամբ:

Մամուրյանն առանձնացնում է կյանքի հետևյալ փուլերը.

Վաղ մանկական տարիք (ծնվելու օրից մինչև 3 տարեկան)

«Մանկային շրջան» (3-7 տարեկան)

ա) Առաջին ստորակարգ շրջան (3-4; 4-5 տարեկան)

բ) Երկրորդ ստորակարգ շրջան (4; 4,5-6 տարեկան)

գ) Երրորդ ստորակարգ շրջան (6-7 տարեկան)

«Բուն մանկական տարիք» (7,8-14,16 տարեկան)

---

[11] Մամուրյան Մ., Գիտելիք և պարտիք տղոց, էջ 13:
[12] «Արևելյան մամուլ», 1884, հունիս, էջ 324:
[13] Ըստ Հայ մանկավարժներ, խմբ. Ա.Շավարշյան, գիրք Բ, 1961, էջ 56:

«Արբնութեան հասակ» (աղջիկների մոտ՝ 14-20 տարեկան, տղաների մոտ՝ 16-24 տարեկան)

«Հասուն տարիք» (աղջիկների մոտ՝ 20-40, 50 տարեկան, տղաների մոտ՝ 24-50, 60 տարեկան)

ա) կանանց մոտ՝ 20-35 տարեկան, տղամարդկանց մոտ՝ 24-45 տարեկան

բ) մինչ ծերության տարիք

«Ծայրագույն տարիք – ծերություն» (մինչև մահ)

Մ. Մամուրյանը նշում էր, որ կրթությամբ կարելի է զբաղվել երեք տարեկանից սկսած: Մանկական շրջանի ֆիզիկական դաստիարակության հիմնական նպատակն է «շարժումներու մեջ ճարտարությունը»[14], որին հասնելու համար պետք է մշտապես հետևել մանուկների քայլվածքին, կազմվածքին, նկարչությանը, գծագրությանը և այլն, իսկ մտավոր զարգացման առանձնահատկություններն ընդգծելու համար առանձնացնում է մի քանի կանոններ, տալիս դրանց իրագործման պայմանները. մշտապես մաքուր օդի առկայություն, նստարանների և սեղանների բարձրության համապատասխանություն երեխաների հասակին, մարմնամարզական կրթության ապահովում, ժամանակ առ ժամանակ զբոսանքների կազմակերպում՝ «կարելի եղածին չափ բաց օդին, յորդորելով որ ուժգին շնչեն օդը, պետք չէ տկար տղաքը, որ վտիտ արիւն ունին, պարտավորել որ ուժեղ տղոց պես անընդհատ աշխատութեան ենթարկին»[15]:

Նա առավել հանգամանալից անդրադառնում է դեռահասության տարիքին և մեր օրերի «փոթորկալից շրջանի» փոխարեն կիրառում է «ստեպ շփոթ ժամանակը»: «Կարծես թե թույլ ու խրատական բաներե դժգոհ են: Ավելի կանոնի ու պատճառներու պետք ունին»[16]: Այս տարիքի երեխաները կանգնած են ճշմարտությունը գտնելու ճանապարհին: Այս տարիքում շատ կարևոր է, որ ուսուցիչը ճիշտ մեթոդներով աշխատի, արագ անցում կատարի ինդուկտիվ մեթոդից դիդուկտիվին և հակառակը կամ, ինչպես Մամուրյանն է նշում, երբեմն դիմել «մակածության մեթոդին», որը շատ նման է եզրահանգման մեթոդին: Մամուրյանը տարիքային այս շրջանի համար խիստ կարևորում է ֆիզիկական և մտավոր առանձնահատկությունները և տալիս դրանց մանրամասն նկարագրությունը: «...Կենաց այս շրջանը խիստ նպաստավոր կենսական նշաններ կ՛յայտնէ»[17]: Մ. Մամուրյանը նույնիսկ նշում է այս տարիքում հաճախակի հանդիպող հիվանդությունները՝ դրանց պատճառը համարելով ծնողների և դաստիարակների կողմից մանուկների ֆիզիկական առանձնահատկությունների չիմացությունը: Այս տարիքի թե՛ աղջկա և թե՛ տղայի համար անհրաժեշտ է «լավ սնունդ, մաքուր օդ, բաց օդին հարմար շարժումներ, մարմնամարզութիւն, գետային բաղնիք, լայն և ոչ շատ տաք լաթեր, որպես զի ամէն բանէ առաջ մարմինն առողջ ու զորեղ լինի, և այս օգուտներէ զատ մտավոր ձիրքը կ'զարգանայ»[18]: Մամուրյանն ուշադրության է արժանացնում ամեն մի մանրամասնություն, ինչպես, օրինակ, աղջիկների

---

[14] Նույն տեղը:
[15] Նույն տեղը, էջ 226:
[16] Նույն տեղը:
[17] «Արևելյան մամուլ», 1876, փետրվար, էջ 58:
[18] «Արևելյան մամուլ», 1876, փետրվար, էջ 58:

զգեստների ծանրությունը պիտի ընկնի հիմնականում ուսերի վրա, «վերին չփակը (corsage), որով կարելի է հագուստին մեկ մասը կոճկել, պետք է որ լայն ու բավական թույլ լինի կուրծքին համար, իսկ ներքին կրծանոցի կիրառությունը պետք է բոլորովին արգիլել»[19]: Մամուրյանն արգելում է այս տարիքի երեխաներին շատ քնել, քանզի «այս աղէտաբեր սովորութեան մեկ անմիջական հետևանքն է արեան աղքատութիւն և դալուկ»[20]:

Հինգերորդ ենթագլխում խոսվում է Մ. Մամուրյանի գենդերային հայացքների մասին: Մամուրյանն առաջ է քաշում այն միտքը, որ կինը թե՛ հոգևոր և թե՛ բարոյական որակներով ոչնչով չի զիջում տղամարդուն. նա ունի նույնպիսի մտավոր զարգացման տվյալներ, ինչպիսին տղամարդը: Մամուրյանն ընդգծում է կնոջ եռակի դերը՝ ամուսնու համար խոհեմ խորհրդատու, երեխայի համար խելացի դաստիարակ և հասարակության համար պիտանի մարդ, արժանի քաղաքացի: Մամուրյանն իրավացիորեն կոչ է անում հրաժարվել կնոջ դաստիարակության նկատմամբ պահպանողական, հետադիմական մտածելակերպից և լրջորեն զբաղվել կանանց համակողմանի, ազատ, իրավահավասար կրթության և դաստիարակության գործով: Մամուրյանը, մանկան դաստիարակության գործում կարևորելով հատկապես մոր դերը, նշում է. «Ո՞ր կինը ավելի լավ մայր կարող է համարվել, ա՞յն, որ քաղաքային զարգացում չունի և ընկերական խնդիրներու անտարբեր է, թե այն, ով կարող է յուր կաթին հետ մեկտեղ ներշնչել յուր զավակաց հայրենասիրական զգացմունք և ընկերական առաքինությունը, հասկացնել անոնց գողտրիկ լեզվաւ թե ի՞նչ է քաղաքացվո պարտքն ու իրավունքը, սիրելի ընել հասարակաց օգուտը, սովրեցնել ազնիվ, արդար ու անխարդախ լինիլ հասարակաց պաշտոններու մեջ, և այլն, և այլն»[21]:

Մամուրյանը նշում է, որ կնոջ կրթության, նրա ճիշտ դաստիարակության, իրավական իրավունքների ընդունումը կմնա թղթի վրա, եթե հիմնավորապես չփոխվի կնոջ նյութական և հասարակական դրությունը: Կնոջ նյութական վատ դրության պատճառը անգործությունն է, նյութապես և բարոյապես ամուսնուց ունեցած կախվածությունը: Անհրաժեշտ է աշխատանքի սկզբունքը գործադրել, կանանց ապահովել աշխատանքով: Մամուրյանը գտնում էր, որ «հայ կինն ազնվացնող աշխատութեամբ իր արժանապատվությունն ու նյութական կացությունն ապահովէ, հայ ընտանիքը վերականգնէ և ապա ասոր ներգործությամբն վերականգնէ և Ազգն»[22]: Երբ կինն աշխատում է, իր սեփական ջանքերով է ապրում, և ոչնչով կախված չէ ուրիշներից, ապա կարելի է ասել, որ կինը կատարելապես ազատ է մտածելու, խոսելու, գործելու մեջ:

Երրորդ՝ «Մատթեոս Մամուրյանն ուսուցչի և ուսուցման միջոցների մասին» խորագրով գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում խոսվում է այն մասին, որ Մամուրյանը, կարևորելով ուսուցչի դերը, ներկայացնում է այնպիսի պահանջներ, որոնք 130 տարի անց էլ չեն կորցրել իրենց մանկավարժական արժեքը և համահունչ են մեր ժամանակի ոգուն: Մամուրյանն ուսուցչին ներկայացնում է հետևյալ

---

[19] Նույն տեղը, էջ 59:
[20] Նույն տեղը, էջ 60:
[21] «Արևելյան մամուլ», 1876, մայիս, էջ 127, 128:
[22] «Արևելյան մամուլ», 1881, սեպտեմբեր, էջ 345:

պահանջները, որոնք, չնայած այն հանգամանքին, որ առաջադրվել են շուրջ մեկուկես դար առաջ, արդիական են նաև այսօր: Այդ պահանջներն են.

1. Մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործին նվիրվող գործիչը պետք է օժտված լինի մի շարք բարեմասնություններով՝ կենսուրախություն, ինքնիշխանություն, համբերատարություն, ամուր կամք, գործելու եռանդ, ներհուն միտք, որպեսզի կարողանա «միտք ու կամք» շինել: «Անձնական հատկությանց կարգը կրնան դրվիլ ինքնիշխանություն, զվարթություն, կամքի զորություն, գործունեություն, առնի բնություն, որ կռվասեր, ոչ կասկածոտ և այլն»[23]:

2. Իր աշխատանքներն արդյունավետ դարձնելու համար ուսուցիչը պետք է ճանաչի յուրաքանչյուր աշակերտի հոգեկան աշխարհը, նրա հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները, որոշի խառնվածքը և բնավորության գծերը, առանց որի չի կարող այդ պաշտոնում աշխատել: Ուսուցիչը պարտավոր է իմանալ երեխայի «հրաշալի կարողությունները, անոր աճման աստիճանները, ամեն մի աստիճանին անոր ցույց տված ույժերը և այն միջոցներն ու եղանակները, որ կհամարին ամեն մեկ աստիճան իր հատուկ սահմանին մեջ մշակել, մինչև ամենեն բարձր աստիճանն հասնելը»[24]: Առանց այս ամենի իմացության, կարելի է ասել, ուսուցիչը տեղյակ չէ իր գործի բնույթին:

3. Ուսուցիչը պիտի սիրի իր աշխատանքը, պետք է դաստիարակի կոչում զգա իր մեջ, սիրի իր արվեստը և այդ զգացմունքով լի՝ գործադրի բոլոր միջոցները՝ զարկ տալու երեխաների առաջադիմությանը: «Ուսուցչին գործը բնավորություն շինել լինելով՝ այս գործը կրնա կոչվիլ արվեստ և գործողն արվեստագետ, ճիշտ ինչպես կկոչվին նկարիչ և փորագրիչ»:

4. Ուսուցիչը, որքան էլ հմուտ, փորձառու լինի, պարտավոր է մշտապես նախապատրաստվել ամեն մի դասի. «Նա պարտի կանխավ ընտրել իր դասերու եղանակ, յուրաքանչյուր դասու աշակերտաց մտավորական ընդունակութեան հարմարցընելով իր ոճն ու իմաստը»[25]:

5. Ուսուցիչը պարտավոր է մշտապես ավելացնել գիտեցածը, ամեն անգամ լավ նախապատրաստված ավանդել դասերը, ուսումնա-դաստիարակչական աշխատանքների վերաբերյալ պահպանել օրագրեր, կազմել պլաններ, կատարել հաշվառումներ: Ուսուցիչը պետք է ունենա հարուստ բառապաշար, որ տեղին գործածի հարմար բառերը, արտահայտչական դժվարություն չկրի: Մամուրյանն ոչ միայն դնում է այս պահանջը, այլև ցույց է տալիս դրա իրականացման ուղին՝ «ընտիր» հեղինակների աշխատությունների ընթերցումը: Բայց բառապաշարի հարստությունը չպետք է ծանրաբեռնի ուսուցչի խոսքը անտեղի, չափից ավելի հորդառատ բառերով, այլապես բառերի տարափի տակ կմթագնի ասելիքը:

7. Ուսուցիչն իրավունք չունի որևէ ֆինանսական կամ նյութական ակնկալիքներ ունենալ իր պաշտոնից, քանզի այդպիսինը կլինի ոչ թե ուսուցիչ, այլ թշվառ անձնավորություն: Այն մարդը, որ իր մասնագիտությանը հարիր գիտելիքներ և հմտություններ չունի, որ ստիպված է շողոքորթել

---

[23] «Արևելյան մամուլ», 1881, մայիս, էջ 176, 177:
[24] «Արևելյան մամուլ», 1881, մայիս, էջ 176, 177:
[25] Մամուրյան Մ., Համառոտ ընդհանուր պատմություն դպրոցաց համար, էջ 7:

հարուստների զավակներին և նրանց անկարգությունների համար պատժել անտերունչ ու աղքատ մարդկանց զավակներին, «ըսե ինձ թե արդյոք դա ալ թե ոչ ավելի գեթ. իր աշակերտացը չափ թշուառ չէ՞ ...»[26]:

8. Ուսուցչի բարոյական կերպարին անդրադառնալով՝ Մ. Մամուրյանը կարևորում է այնպիսի բարոյական որակներ, ինչպիսիք են հայրենասիրությունը, ազնվությունը, հետևողականությունը, պահանջկոտությունը, արդարամտությունը, աշխատասիրությունը, անկողմնակալ վերաբերմունքը սաների նկատմամբ և այլն: Սանի մեջ որևէ բարոյական որակի ձևավորման համար նախ պետք է ինքդ լինես այդ բարձրության վրա: Դրա համար էլ այդչափ կարևորվում է վերը նշված որակների առկայությունը յուրաքանչյուր ուսուցչի մոտ:

Ուսուցիչը չպետք է լոկ ցանկություն ունենա աշակերտին կրթելու և դաստիարակելու. անհրաժեշտ է նաև այն իրականացնելու կարողություն և հմտություն: «Սոսկ փափագը բավական չէ», անհրաժեշտ է ունենալ նաև փորձ և հմտություն, այլապես օգուտի փոխարեն վնաս կհասցնենք[27]:

Երկրորդ ենթագլուխը նվիրված է Մ. Մամուրյանի ստեղծած դասագրքերի քննությանը, որոնք բնորոշվում են քաղաքական գաղափարախոսության բացակայությամբ, զուրկ են ավելորդ բարբառայնությունից, աչքի են ընկնում լեզվի մաքրությամբ, հստակությամբ, կանոնավորությամբ, բավարարում են երեխայի մտավոր պահանջմունքները և համապատասխանում նրանց տարիքային առանձնահատկություններին: Մ. Մամուրյանը դասագրքեր է ստեղծել դպրոցի տարբեր աստիճանների համար՝ սկսած ծաղկոցից, ավարտած դպրոցի բարձր դասարաններով: Դասագիրքը.

1. պետք է զուրկ լինի քաղաքական գաղափարախոսությունից, որպեսզի չկորցնի իր ազդեցիկ ուժը: «Դասագրքի ընտիր հատկություններեն մինն է անկուսակից ու խաղաղասիրական ոգին»[28]: Ցանկացած դասագիրք պետք է կարողանա իր բովանդակությամբ աշակերտին սիրո և համոզման ոգի ներշնչել:

2. Պետք է զերծ լինի հակասություն պարունակող դրույթներից, քանզի այն խաթարում է դասագրքի նպատակը. «երբ հակասություններով խառն է իրենց պարունակությունը, այս կնշանակէ թե ճշմարտության կատարյալ օրինակներ չեն»[29]: Մշտապես պետք է հիշել, որ դասագրքում զետեղված նյութերը պետք է ներկայացվեն ընկալելի, պարզ, բայց ոչ երբեք պարզունակ լեզվով:

3. Պետք է զերծ լինի ավելորդ բարբառային ձևերից ու բառերից, որոնք գցում են դասագրքի արժանիքը, քանզի «պետք է որ դասագիրքը մանկանց միտքը զարգացնէ, բարձրացնէ, և ոչ թե տղայացնէ ու սեղմէ»[30]:

Մ. Մամուրյանը, ինչպես նշել ենք վերը, կողմ էր աշխարհաբար լեզվին և իր գրքերը գրում էր հենց այդ լեզվով. «Ինչպես որ կը խօսինք, այնպես պետք է

---

[26] «Արևելյան մամուլ», 1876, հունվար, էջ 13:
Բայց և չլինի ըստ Հ.Պարոնյանի. « անիծե՛մ՝ վարժապետ ըլլաս»:
[27] Տե՛ս «Արևելյան մամուլ», 1876, փետրվար, էջ 72, 71:
[28] «Արևելյան մամուլ», 1877, հոկտեմբեր, էջ 393:
[29] Նույն տեղը:
[30] Նույն տեղը, էջ 396:

որ կարդանք»[31], այլապես ուսուցումն ապարդյուն կանցնի, հատկապես այն դեպքում, երբ գործող դասագրքերում «կտեսնվին գրաբարի սխալ խնդիրներ, ինչ-ինչ բառերու առջև օտարամուտ բացատություններ, թե՛ գրաբար և թե՛ աշխարհաբար նորակազմ բառեր, ավելորդ մակդիրներ»[32], որոնք և՛ անհասկանալի, և՛ դժվարամարս են դարձնում ուսումնական նյութը:

5. Պետք է համապատասխանի երեխայի մտավոր պահանջմունքներին և տարիքային առանձնահատկություններին: Անարդյունավետ և անիմաստ աշխատանք է, երբ «տասն տարու աշակերտի մը ձեռք տալ պատմագիր մը, զոր քսան տարեկան պատանին անգամ հազիվ կարող է ըմբռնել ու մարսել»[33]:

6. Չպետք է կառուցված լինի զուտ հարց ու պատասխանով, քանի որ «հարց ու պատասխանով շինուած դասագրքերը թե՛ աշակերտը կ'մեքենայացնեն և թե՛ դասատուն»[34]: Նմանատիպ կառուցվածք ունեցող դասագրքերից օգտվելիս աշակերտը, դասի ամփոփ միտքը ուսանելու փոխարեն, սովորում է անկապ և կտրտված իմաստներ, և եթե հարցադրման հաջորդականությունը փոխեն, երեխան անկարող կլինի ցույց տալ իր իմացածը: Այս դասագրքերն ուսուցչի աշխատանքը դարձնում են մեքենայական. նա չի կարողանում պայմաններ ստեղծել աշակերտի զարգացման համար: «...Հարցերն ուրիշ բանի չեն ծառայեր, այլ միայն աշակերտի զարգացումն սահմանափակել, դասատուն ծուլացնել և դասագիրքը ստվարացնել»[35]: Սրանից չի կարելի սխալ եզրակացության հանգել, թե Մ. Մամուրյանն իբր դեմ էր հարցերի կիրառմանը դասագրքերում: Ամենևին ո՛չ, քանի որ նա դեմ էր զուտ հարց ու պատասխանով կառուցված դասագրքերին, և կողմ է այն հարց ու պատասխանին, որոնք «իրարու յարմար լինին, ուղղակի և տրամաբանօրեն դասուին»[36]:

7. Պետք է լինի այնպիսին, որ նրանից կարողանան օգտվել ոչ միայն ուսուցիչները, այլ նաև ծնողներն ու երեխաներն իրենք՝ ինքնուրույնաբար: Դրա համար անհրաժեշտ է, որ «Դասագրյանց մեջ ամենէն փոքր բաներու վրա անգամ մեծ ուշադրություն դարձնելու է»[37], որպեսզի այն կարողանա նպաստել աշակերտների կրթական գործին:

Մ. Մամուրյանի դասագրքերում տեղ են գտել այնպիսի բնագրային նյութեր, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց կրթադաստիարակչական նշանակությունը և շարունակում են տեղ գտնել մերօրյա դասագրքերում: Այսքանից դժվար չէ եզրակացնել, որ Մ. Մամուրյանն ստեղծել է այնպիսի դասագրքեր, որոնք նույնիսկ 130-140 տարի անց չեն կորցրել իրենց կրթադաստիարակչական նշանակությունը:

---

[31] Մամուրյան Մ., Գիտելիք և պարտիք տղոց, էջ 7:
[32] «Արևելյան մամուլ», 1877, հոկտեմբեր, էջ 389 -390:
[33] Մամուրյան Մ., Համառոտ ընդհանուր պատմություն դպրոցաց համար, էջ 4:
[34] «Արևելյան մամուլ», 1877, հոկտեմբեր, էջ 388:
[35] Նույն տեղը, էջ 389:
[36] «Արևելյան մամուլ», 1877, հոկտեմբեր, էջ 398:
[37] Նույն տեղը:

Եզրակացություններ

1. Դպրոցը համարելով ազգային իմացության հիմնասյունը՝ Մ. Մամուրյանը նրան վերագրեց կրթական և հայրենապահպան, ազգասիրական գործառույթներ:
2. Մ. Մամուրյանը մշակեց նոր ուսումնական ծրագիր, որի հիման վրա դպրոց մտցրեց նոր ուսումնական առարկաներ, կիրառեց ուսուցման նոր ու արդյունավետ մեթոդներ ու սկզբունքներ, որոնք գիտական հիմնավորում էին ստացել և փորձաքննություն անցել եվրոպական առաջավոր մանկավարժության մեջ: Նրա կիրառած զննականության, մատչելիության, համակարգվածության, սովորողների տարիքի, հոգեբանության, անհատականության հաշվառման սկզբունքներն արդիական են նաև այսօր, իսկ մեթոդները կիրառվում և բարձր գնահատականի են արժանանում մեր օրերում, քանզի մեծապես նպաստում են ուսուցման գործընթացին արդյունավետության բարձրացմանը;
3. Մ. Մամուրյանը կրթության հիմնական նպատակը համարում էր համակողմանի և ներդաշնակ զարգացումը՝ ուսուցումը կապելով դաստիարակության հետ, դաստիարակությունը՝ կյանքին: Դաստիարակության մեջ կարևորում էր նրա առանձին կողմերի բովանդակությունը ու նրանց միջև եղած կապերը, ինչպես նաև զարգացման միտումները:
4. Մ. Մամուրյանը կարևորում էր հայեցի դաստիարակության դերը: Նա ազգն ուծացումից փրկելու հզորագույն միջոց համարում էր լեզուն՝ ընդգծելով, որ լեզուն հասարակության առաջընթացն ապահովող գործոն է, միաժամանակ՝ այլ մշակույթներին հաղորդակցվելու հիմնական ուղի:
5. Մ. Մամուրյանը, գործուն մանկավարժ լինելով, տվեց ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների գիտական մեկնաբանումը, առանձնացրեց ուսուցչի անձնային ու մասնագիտական որակների կապը: Նա հիմնավորեց, որ ուսուցիչը պիտի լինի կենսուրախ, համբերատար, բանիմաց, սիրի իր աշխատանքը և իր աշակերտներին:
6. Մ. Մամուրյանը մեծ նշանակություն էր տալիս կնոջ դաստիարակությանը՝ ընդգծելով, որ միայն դաստիարակված անձը կարող է դաստիարակել: Նա կոչ էր անում հրաժարվել կնոջ դաստիարակության նկատմամբ պահպանողական, հետադիմական մտածելակերպից ու մոտեցումներից և լրջորեն զբաղվել կանանց համակողմանի, ազատ, իրավահավասար կրթության ու դաստիարակության գործով:
7. Մեծ արժեք են ներկայացնում Մ. Մամուրյանի կազմած դասագրքերը, որոնք զուրկ են քաղաքական ուղղվածությունից, աչքի են ընկնում լեզվական մաքրությամբ, հստակությամբ և կանոնավորությամբ, բավարարում են երեխայի մտավոր պահանջմունքները և համապատասխանում նրանց տարիքային ու հոգեբանական առանձնահատկություններին: Մ. Մամուրյանի դասագրքերում տեղ են գտել բնագրային նյութեր, որոնք մեր օրերում ևս չեն կորցրել իրենց

կրթադաստիարակչական նշանակությունը և շարունակում են տեղ գտնել մերօրյա դասագրքերում:

8. Մ. Մամուրյանի մանկավարժական ժառանգության կողքին ոչ պակաս դեր ունի գրական ժառանգությունը, որին բնորոշ է ազգային դաստիարակության ուղղվածությունը: Նա մեծ ներդրում է կատարել նաև թարգմանական գրականության մեջ՝ թարգմանելով եվրոպական դասականների բարձրակարգ գործերը:
9. Մ. Մամուրյանը, ուսումնասիրելով եվրոպական երկրների՝ Անգլիայի և Ֆրանսիայի մանկավարժության նվաճումները, վերցրել է արժեքավորը, տեղայնացրել է այն, ստեղծել ինքնատիպ մանկավարժական համակարգ՝ օգնելով մեզ այսօր ինտեգրվել եվրոպական կրթական կառույցներում:
10. Մ. Մամուրյանի մանկավարժական հայացքներն իրենց գիտական թարմությամբ հրատապ են ու արդիական նաև այսօր, կարող են դրվել մերօրյա մանկավարժության հիմքում, օգնել լուծելու մանկավարժության առջև դրված ժամանակակից խնդիրները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված է հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Սարգսյան Ա. Ս., Կնոջ իրավահավասարության և դաստիարակության հարցն ըստ Մ. Մամուրյանի, «Վասն արդարութեան» , Վանաձոր, 2005, N 3, էջ 55-57
2. Սարգսյան Ա. Ս., Մ. Մամուրյանի գործադրած ուսուցման սկզբունքների արդիականությունը, «Վասն արդարութեան», Վանաձոր, 2005, N 4, էջ 71-73
3. Սարգսյան Ա. Ս., Մ. Մամուրյանը համակողմանի դաստիարակության մասին, «Մանկավարժություն», Երևան, 2005, N 2-3, էջ 96-101
4. Սարգսյան Ա. Ս., Տարիքային պարբերացումն ըստ Մ. Մամուրյանի, ՎՊՄՒ-ի գիտական նյութերի ժողովածու, 2005, էջ 86-89
5. Սարգսյան Ա. Ս., Ուսուցչի կերպարը՝ մերօրյա պահանջների դիտանկյունից «Մ. Մամուրյանի մանկավարժական հայացքներից», «Նախաշավիղ», Երևան, 2005, N 3-4, էջ 538-546
6. Սարգսյան Ա. Ս., Մ. Մամուրյանի ֆիզիկական դաստիարակության համակարգի ժամանակակից արժևորումը, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, 10-12 /2012 թ., էջ 125-127:

САРКИСЯН АРЕГНАЗАН СААКОВНА

МАТЕОС МАМУРЯН–ПЕДАГОГ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01-“Теория и история педагогики”

Защита диссертации состаится 13-го июня, 2013г., в. 14^{00} часов на заседании специализированного совета 020 ВАК “Педагогика” по присуждению ученных степеней при Армянском государственном педогогическом университете имени Х.Абовяна по адресу: 0010. г. Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуалность исследования. Исходя из принципа историзма, можно утверждать, что каждое историко-педагогическое исследование актуально.

После приобретения независимости перед республикой встала проблема создания новой, национальной школы. Решения этого вопроса обуславливается глубоким и всесторонним изучением многовековой истории армянской школы и педагогической мысли. С этой точки зрения своевременным и актуальным становится проблема изучения педагогического наследия малоизучонного в армянской педагогической историографии видного педагога М. Мамуряна.

Цель исследования. Оценка педагогических идей видного армянского педагога, писателя, публициста М. Мамуряна в контексте создания новой национальной школы.

Задачи исследования:

- представить жизненный путь М.Мамуряна и его научно педогогическую деятельность.
- изучить видвигаемые им требования к учителю, содержанию образования и воспитания, и сопоставить с современными требованиями.
- проанализировать составленные им учебники в свете современных требований.
- изучить методику воспитания и обучения, предложенную М.Мамуряным и выделить те идеи, которые не потеряли своей значимости до сегодняшнего дня.

Научная новизна исследования. В диссертации дается целостная картина педагогической деятельности и педагогических воззрений М. Мамуряна, одного из апологетов национального воспитания, что созвучно сегодняшним требованиям новой школы.

Теоретическое значение исследования:

- были систематизированы и уточнены педагогические взгляды М. Мамуряна, что поможет созданию целостной истории армянской педагогической мысли,
- анализ педагогических взглядов М. Мамуряна стал научно – теоретическим источником для оценки уровня развития западно-армянской педагогической мысли,
- исследование дополняет образ западно-армянского педагога, национального деятеля и публициста М. Мамуряна,
- устанавливает связь между педагогическими взглядами М. Мамуряна и современной школой и педагогикой.

Практическое значение исследования:

- данное исследование может стать основой спецкурса для студентов педагогических вузов,
- исследование может помочь введению соответствующих изменений в современных школьных учебниках, акцентированию национального воспитания школьников и обеспечению их всестороннего и гармоничного развития,
- исследование может быть полезным в разработке новой концепции национального воспитания и внедрения новейших технологий.

Апробация и внедрение результатов. Материалы диссертации периодически использовались в Ванадзорском педагогическом институте и в армяно-русском международном университете “Мхитар Гош” в процессе преподавания педагогических дисциплин.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений. По теме диссертации опубликовано шесть статей.

SARGSYAN AREGNAZAN SAHAK
MATEOS MAMURYAN– PEDAGOG

Thesis foor candidate of Pedagogical Science degree, speciality 13.00.01-"Theory and History of Pedogogy".

The defense of the thesis will take place on June 13, 2013 at 14^{00} at the meeting of the specialised pedagogical committee 020 HAC for granting scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
(address: Yerevan 0010, Tigran Mets str. 17)

SUMMARY

The Relevance of Research:

Considering the principle of historism, it is possible to state that every historical and pedagogical research is important . After gaining independence, our republic pursues the goal of creating a new school of national values. The realization of this goal accounts for a profound and versatile study of the history of Armenian schools and the pedagogical thought. From this perspective, the pedagogical legacy of the prominent educator M. Mamuryan,poorly studied in the Armenian pedagogical historicography, becomes more relevant and urgent.

The Aim of the Research: The investigation and evaluation of pedagogical thoughts (ideas) of the prominent Armenian educator and publicist M.Mamuryan in the context of creating a new national school.

The Objectives of the Research:

1. the Introduction of M.Mamuryan's life and his scientific and pedagogical activities.
2. the study of the requirements placed by him to the teacher, the contents of education and upbringing and their comparison with up-to-date(today's)demands.
3. the analysis of the textbooks composed by him according to contemporary demands.
4. the study of the education system crented by M.Mamuryan, and his the ideas which remain valuable up to date.

The Scientific Novelty of the Research.

The thesis gives a comprehensive picture of M.Mamuryan's pedagogical activities and views, which are relevant to the requirements of the new school.

The Theoretical Importance of the Research:

1. the pedagogical views of M. Mamuryan were systematized and clarified contributing to the creation of a comprehensive history of a pedagogical thought.

2. the analysis of M.Mamuryan's pedagogical views has become a scientific and theoretical source for assessing the development level of the western Armenian pedagogical thought.
3. the research complete the image of the western Armenian education, national leader and publicist M.Mamuryan.
4. the research establishes a link between Mamuryan's pedagogical views and today's school pedagogy.

The Practical Importance of the Research:

1. the present research can serve as the basic special guide-book for the students of pedagogical universities.
2. the research can contribute to the introduction of corresponding changes in the contemporary text books, emphasizing national educational pecularities and ensuring their multifunctional synchronic development.
3. the research may be useful for in the development of a new concept of a national upbringing and the introduction of advanced technologies.

Testing and Implementation of Results. The thesis material has been periodically applied at Vanadzor State Pedagogical Institute and at "Mkhitar Gosh" Armenian –Russian International during the teaching of the pedagogical disciplines.

The Thesis Consists of an introduction, three chapters, a bibliography and appendices. Six articles have been published on the topic of the thesis.